

Մկան ականջ կա,
Քյի չկա!

Մանուկները, որ համոզված էին, թե ուղարքան սմբական է այդ բառելը և խիստ դայրանում է. տպարդյուն սպասում էին ուղարքի դայրույթին: Ամեկայն ուղարք անցնում էր դանդաղ ու անարդիրու

*
Արճակի հըեխաները շատ էին սիրաւ դայրացնել նաև քաղաքացիների երեխաներին, ուրոնք, այսուղև թե այսպես, ժամանակավոր ընկրնում էին գյուղու օթե հստաները կոված էին լինում, ապա ընկերովի երդում էին՝

—Քյաղքըցի,
Քայ կըալցի,
Էշ խեծուցի,
Կեան ընցուցի,
Էշ զուց՝
Քյաղքըցին ասաց՝
—Փառք քյի, ասպած:
Էշ տըառեց՝
Քյաղքըցին
Վախեցավ,
Պեռ-բարխանեն
Թողեց-իւախավ:

Քաղաքացի մանուկները ևս իըենց ասելիքն ունեին: Բավտկան էր, որ նրանք հանդիպեին քաղաքի փողոցում որևէ գյուղացու, ապա անմիշա-

պես ձախ ձեռքի բթամատով ու ցուցամատով իրենց քիթն էին բոնում, աշ ձեռքով իրենց ծնոսութեան կանչում՝

Շինական,
Շակալ պերան,
Շնթըռի վեր սկսան:

Տարտիկին ողղված կատակերդ՝
Անձրի էկավ լաւլու-լաւլա,
Թովիրմ շիլա, մեյ զյուլուլա,
Տերտեր, ժամիսար, նաշն էլ ոփլա,
Մամիկ տարան, աշխար կուլու:

Երդ-կատակ՝ ատնտիկիների հասցեին՝
Տանտըկին,
Տավրի տըկին,
Տավրի շլուա
Զոքյե բըկին:

Փոքրիկ տղաներին ուղղված կտտակ-պատվեր՝

Տղա, աղա,
Ոսկի ջղա,
Առ քյու ձտներ՝
Կնա խաղա
Չուր իրիկուն,
Նոր արե տուն:

Ա. Ի. Ա. Ծ - Ա. Ս. Ա. Ց Վ. Ա. Ծ Ք Ն Ե Բ

Ահմադ շտվեց, Մայմադ շվերուց:

*
Աղքյատ աղքյըտին խառցուց՝ «Մեղքիտ պեռ վի՞րն ի», ասաց՝ «Նյա իմն ի, նյա քյոն»:

*
Աղքյատ ասաց՝ «Իմ ծավաը մուկ կիրեր ի» ավստագող շէլավ. զանդիին ասաց՝ «Իմ սարվածք մուկ տարեը ի» շավաացող շէլավ:

*
Աղքյտի վրեն թաժա խալավ տիսնող շի ասե «Ծնախավոր ըլնի», կխառցուցի՝ «ողաեղից ի»:

Ամանաթ՝ շեն անե կիյամաթ,

Անավլադ հիսան, անկարաքյ հեսան՝ աշխըրքին փայդա շեն իտա:

Անխալ տելտրու խաշխամբուր ուստու:

Անձրըվու տայ ինդյած ճամխորթին՝ ուաղ թոն շեն իտա:

Անոթի մարթու խտմար՝ ծավլով վոռշն ավելի խամով կըլնի, քանձ կուշա մաըթու խամար՝ թաթարի խավիծ:

Աշխարքն ուղի բառին ըլնի, սարի կյուխ սարին կըլնի:

Աշնան արե իմ որթուն, կյարնան արե իր
խորթուն,

Աշիլ խառցուցին՝ «Խնչի հյա կթարթեսս, ա-
սաց՝ «Տիսածիցս կվախենամք»:

Առծիվ ինչկանդար էլ պանցր թանի, լու էլ
ուր պյոն երկրի էրեսին ին

Առքյավութնի մեջն լլ կրակ կա, տժըխոցի
մեջն էլ

Ասիցին՝ «Եթու ծառ ծաղկավ», ասպած ա-
սաց՝ «Խնչի ես մեռուկ եմք»:

Ասպած որ ուզի զանգընին ուրախցուցի՝
պյառցուկ էշ կմոլորցուցի, կպիրի կայնցուցի վեր
ինոր տռան. որ ուզի աղքյտին ուրախցուցի՝ ինոր
էշ կուրիոցուցի, սոն-սոնեն կտանի տեղ շանց
կտառա:

Ասպած որթին առեց ուր, մըոմուռ ավեց Տի-
րամոր:

Թարդի ծառ քյամուց կըհերերվի, համա քյոք-
յախան չի ըլնե:

Թենտմուսի իրիսին թըքյիցին՝ ասաց անձրե
իկավ:

Թոշից՝ փաշա չի ըլնե:

Թոշ քյսւֆըթի տիրու պուտկի մեշ՝ վռոշ չի
ավրինա:

Եղ աատի՝ էշն ուտիր եղան աիրոշն էլ ի՞նչ
պիաի:

Ես աղա, տյու աղա, մեր աղուն վո՞վ աղա:

Երկնուց թափված ինչ էլ որ ըլնի, երկիր կվի-
րուցի:

Զանդրնի պենից, որ սխառախոս կյա, յան
խաշ ի կիրե, յան քյալագյոշ:

Էշ՝ երուսաղեմ էրթալով, մուզսի չի այառնա:

Երկեն թելիկ,
Կարձ ասըզիկ,
Հե՞ր աղբյութիկ:

Թյոքից՝ խարիսսա չի տրվե:

Ժամաան զանգեր զարկիցին՝ տիրացույի քյուն
նոր էկավ:

Ինչ կյուղուն՝ հընթին, ինչ պուղուն՝ մաքին:

Իշուն ասին՝ աշկըա լսս, քյե քուսայմ էլավ,
ասաց՝ էլավ-շէլավ, պեռն իմ քյամկեն պակաս
շէլավ:

Լեղվին ուսկու չկա, որ ակըոկի:

Խաբար ճոշին, ճուր պստըկին:

Խաշին նոսր էր, օրդուն իճտվ վրեն. քյաղվորն
ի՞նչ անի:

Խաշն իմն ի, զորութեն ես կյիանմ:

Խացըն՝ խորես, ճիժըն՝ փորես:

Սակ ունիկ կյեաին չի մնա:

Կալի եղան մոռու՝ լարնով չեն կապե:

Կատվուն խառցուցին՝ «Քյու մերն ի քյե շատ
կուղի, թե՞ քյու խերք, ասաց՝ «Նյա օ, նյա օ»:

Կաառն կիրե կիդըրմ միս. էսը քյար, էսը
կըշեռք՝ կատուն տընենք կըշըռենք:

Կատուն տուն չի, մկներ հանդյուն-հտնդյուն
կվաղվեն:

Կրնդյան ծամ հերկեն կըլնի՝ խելք կառճ.
մարթու միտք հերկեն կըլնի, ծեռ կառճ:

Կյելու կյիսուն ավետրան կարթացին, ա-
սաց՝ «Շոա արեք, ոչխար սարից կնաց»:

Կյեղի կատուն՝ կաթի սերից զավոկ չի մնաւ
 *
 Կլլոխո մո իմ տան մեջն ըլնի, ոտքերս թս
 այսու մնաւ
 *
 Կյոզ որ տնեն բլնի, ևզն էրտըսնեն կըխանի
 *
 Կյոզ՝ սիրու այսոյ
 *
 Կիսուրի խարսից ինատ արաց, կաթ թսղեց
 կատրվներաց
 *
 Կրակ շէլտծ ահղից՝ մուխ այսուս շիկաւ
 *
 Կուպի՝ ալամ—աշխար մեյ պոնով պոնես,
 մեկ օր իլել ես, մեկ գր էլ պիափ մեսնես
 *
 Կուպի տառ տարի էշն անպյառց մնա, էլ՛մ էլ
 պոչ չի հերկրնեաւ
 *
 Հիսանի աշկ մեյ խողն ի, որ կըկշաացուցի
 *
 Հմեն՝ «Խաշսն» խաշոխնենք չի կանա անս
 *
 Հմեն կնիկ ուր աան կժի պաղ ճուրն ի, համա
 խունարով կնիկ՝ ուր աըռան դուլալ ախտուրն ի
 *
 Հմեն պոշ՝ ուր տիրոշն ի:
 *
 Հմեն պտուղ մեյ խամ չի ըլնես
 *
 Մալ՝ աիրանոման ըլնի, հյասնա դյողացուրիկ
 կըլնի
 *
 Մարթ որ ոտքեր՝ որ լըխեփի դյորա կըուար-
 դի
 *
 Մեյ փեթակի մել էրկու մեր շեն նսսեւ
 *
 Մըդրու ախշիկ տարան—արիցին թաքավուն
 խարս, ծեռ պարզեց կիսրոշն ասաց՝ «Փառսեմըն
 բդա» (իմ պատառ հացը տուը):
 *
 Մըգրուն թան տվեցին, ասաց՝ «Չորթան էլ առու»:
 *
 Մթան մեշ քելողի սու՝ յան քյարին կտիպնի,
 յան՝ փետին:
 *
 Միճինքյին՝ մատաղ շեն մարթեւ
 *
 Մոն իրիկ՝ յոթ շիրիկից առավել իւ
 *
 Մուկ ծակ շէր մտնե, շախկյան պոչ կապիցին,
 *
 Մուկն էլ կըճրկճրդտտ, խավուն ճեսն էլ. խո
 ասնաիկնու խամար մեյ պյան շեն:
 *
 Մուկն ինք մեյ պյան չի, համա որտեղ ինի՝
 կըլսարամի
 Ցոթրն քյաղվոր մեյ մաթրաթ ճաշով կկըշտա-
 նան, համա մեյ թաքավոր յոթրն աշխըրքով չի
 կշտանա:
 *
 Նյա լուսընկի շող կըլնի, կուռուղլու՝ կրյ-
 լուն:
 *
 Նյա սելին սստուն կսիվաըկցուցի, նյա խեվին
 խրատ կիսելացուցի:
 *
 Նյա սելին սստուն կսիվաըկցուցի, նյա խեվին
 խրատ կիսելացուցի:
 *
 Շան արժալ որ կյա, կէրթա շամու տըռան
 կըքաքի:
 *
 Շիրիկ առված որ աղեկ պյան ըլներ՝ ասպած
 խատր՝ էլ ուր խամար կըսաեղծեր:
 *
 Շնից ծնված՝ յան քյոփակ պիափ տառնա,
 յան՝ դել:
 *
 Որ հիսանի ծեռ կարճ ըլնի, լեղուն դիղինք կը-
 կառճանա:
 *
 Որ քյարթու խաց չես կանա ուաե, աղեկը՝ մ
 անոթցի, կաառնա եղով պաղարճ:
 *
 Չում ճիժ շիլա՝ մեր ծիժ շիաա:
 *
 Պաղ ճրիից՝ մարթու պերան չի վառվե:

Պառվցած՝ տառնցած:

Պըստուճներաց հմենից տառն աղքըտութենն
ի, պարտքերից հմենից զոռը՝ խյոկին տալն ի,

Պըսաիկ կյախ՝ շան քյոթոթն էլ խորոա կըւ-
նի, իշու քուսակն էլ:

Պտուղ ուր ծառից շատ զատ չի ինեւ:

Պուառկն ասաց՝ «Տակո ոսկի կա» շերեփն
ասաց՝ «Ես Հուստ կույամ»:

Ուս չէլած տեղ՝ կյալին էլ «աղա» կկանչեն,

Սթի պոչ՝ հերկեն կըլնի, ծեր՝ չուխի տկից
կթըռնի տուսւ:

Սյուրյ չէլած ասուն էրսլսից՝ վույ-վույր ծսն
տուսւ չի կյա:

Սոխի սեյրադն ի որ կյուխ կուաս:

Տախ ախչկան ասիցին՝ «Ընչի» չես կընացե
իրկան» ասաց՝ «Ուղող չէկավ, իմ խերն էլ չի-
առւբ»:

Յան, որ Էսեռու տաստնին ցինսն, տախտն
անավել կմնա:

Տաշտի խմոր ի՝ թխելով կըխլըսի, խո թաշտի
լվածք չի, որ սատանեն ավըցուցի:

ՕՇՆԱՆՔ, ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ, ԵՐԴՈՒՄ, ԱՆԵԾՔ, ՊԱՐՄԱՎԱՆՔ

ՅՐՃԱՆՔ

Առած քյե հերկեն ումբր անի,

Ատենախոս՝ Խանա Փյոթիկի սըփ Կյառը ուր
զորութնով քյե հիմդաա ըլնի:

Դոր որ էրթաս՝ ճամխետ դուղ ըլնի, կըսմա-
թըտ՝ յուղ-դուղ ըլնի:

¹ Սովորաբար այս օրհնանքները ուղղված են աղա-
մարդկանց:

Տերտըըու խարս՝ նշխարքյ ճրի ճամխեն կու-
տի:

Ուոռ ծառ կէրթա-կյուկյա, կասի՝ «Ես դարդի
տեղ եմ».

Թարդի ծառ կէրթա-կյուկյա, կասի՝ «Ես սիրու
տեր եմ».

Քյան բարդի ծառ՝ պանցր չկա, քյան սիրու տեր՝
քյանցր չկա:

Քյամին ասաց՝ «Մարաքյ, այուրդտ պյաց, քյե
հառթ եմ պիրե».

Մարաքյն ասաց՝ «Նյա քյու պիրած կուղեմ, նյա
քյու ապաժամ»:

Քյամին ասաց՝ «Վույ, վույ, վույ, իմ առւն-
տեղ քյամին տարավ»:

Քյամիմ՝ կուղի պոշն հերկըննա, կյուստան
կաել ծովկ չի առոնա:

Քյառոսն փակ տիր վեր առան, կրողի առաճ
չի պոնվե:

Քյսթադն՝ առքավութնից ի իկե:

Օցի կծած կըսաղանա, լեզվի կծած չի սա-
ղանա:

Օցն ի որ կանա մտնի օցի պյոնի մեւ, խո
խովի կոպալ չի՝ կանա մտնի օցի պյոն:

Թըխթըմորըտ օխնուկ մնա:

Իոս կաթի վեր քյու խոր-մոը կյերեղմնին:

Խաղաը օղորմի քյու ծնողաց:

Խեր Ապրախամու կյոք նստելուն առծանա-
նաս: